Առողջապահության համաշխարհային կազմակերպության Սահմանադրություն

Սույն Սահմանադրության անդամ պետությունները, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության համապատասխան, հայտարարում են բոլոր ժողովուրդների երջանկությունը, ներդաշնակ հարաբերություններն ու անվտանգությունն ապահովող հետևյալ հիմնարար սկզբունքների մասին.

Առողջությունը լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ է, այլ ոչ թե պարզապես հիվանդությունների կամ ֆիզիկական թերությունների բացակայություն:

Առողջության առավելագույն բարձր մակարդակի առկայությունը և դրանից օգտվելու հնարավորությունը յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից մեկն է՝ անկախ ռասայից, կրոնից, քաղաքական համոզմունքներից, տնտեսական կամ սոցիալական պայմաններից:

Բոլոր ժողովուրդների առողջությունը անհրաժեշտ պայման է հանդիսանում խաղաղության և անվտանգության ապահովման համար և կախված է անձանց և Պետությունների հնարավորինս սերտ համագործակցությունից:

Առողջության ապահովման և պահպանման գծով որևէ Պետության ձեռքբերումներն ունեն համընդհանուր արժեք:

Տարբեր երկրներում առողջապահության ապահովման և պահպանման, ինչպես նաև հիվանդացության, հատկապես վարակիչ հիվանդությունների վերահսկման մակարդակի բարձրացման գծով անհավասար զարգացումը համընդհանուր վտանգ է հանդիսանում:

Երեխաների առողջ զարգացումը վճռորոշ նշանակություն ունի. այդպիսի զարգացման համար անհրաժեշտ է փոփոխվող շրջակա միջավայրի հետ ներդաշնակ գոյատևելու կարողությունը:

Բժշկական, հոգեբանական և այդ ոլորտների հետ կապված այլ գիտելիքներից քաղվող օգուտների ավելացումը բոլոր ժողովուրդների համար էական նշանակություն ունի առողջապահության մակարդակի առավելագույն բարձրացման համար:

Հանրության կողմից ցուցաբերվող մասնակցությունը և ակտիվ համագործակցությունը անգնահատելի նշանակություն ունեն մարդկանց առողջության բարելավման համար:

Կառավարությունները պատասխանատու են իրենց ժողովուրդների առողջության համար, և այդ պատասխանատվությունը կարող է իրականացվել միմիայն դրա ապահովմանն ուղղված համապատասխան միջոցներ ձեռնարկելու պայմանով:

Ընդունելով սույն սկզբունքները, ինչպես նաև բոլոր ժողովուրդների առողջության պահպանման մակարդակի բարելավման համար միմյանց միջև և այլ երկրների հետ համագործակցելու նպատակով Պայմանավորվող կողմերն ընդունում են սույն Սահմանադրությունը և դրանով իսկ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 57-րդ հոդվածին համապատասխան, որպես մասնագիտացված հաստատություն, հիմնում են Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:

Գլուխ 1
Նպատակներ

Հոդված 1

Առողջապահության համաշխարհային կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ նպատակը բոլոր ժողովուրդների կողմից առողջապահության առավելագույն բարձր մակարդակի ապահովումն է:

Գլուխ 2
Գործառույթներ

Հոդված 2

Սահմանված նպատակներին հասնելու համար Կազմակերպության կողմից իրականացվող գործառույթները հետևյալներն են.

ա/ գործել որպես առողջապահության մակարդակի բարձրացմանն ուղղված՝ միջազգային գործունեությունը կառավարող և համակարգող մարմին,

բ/ համագործակցության արդյունավետ օղակներ մշակել և պահպանել Միավորված ազգերի կազմակերպության, մասնագիտացված հաստատությունների, առողջապահության ոլորտի համար պատասխանատու պետական մարմինների, մասնագիտական խմբերի և այլ կազմակերպությունների հետ, որոնց գործունեության նպատակները համապատասխանում են Կազմակերպության նպատակներին և խնդիրներին,

գ/ համապատասխան դիմումներ ներկայացնելու դեպքում օգնություն ցուցաբերել Կառավարություններին բժշկական ծառայությունների զարգացման գործում,

դ/ համապատասխան տեխնիկական օժանդակություն, իսկ արտակարգ իրավիճակների պայմաններում՝ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Կառավարությունների դիմում ներկայացնելու կամ համաձայնություն տալու դեպքում,

ե/ Միավորված ազգերի կազմակերպության կողմից համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում մարդկանց առանձին խմբերին, օրինակ՝ խնամակալության ներքո գտնվող տարածքների ժողովուրդներին, ապահովել բժշկական ծառայություններով կամ տեխնիկայով կամ նպաստել այդպիսի ապահովմանը,

զ/ մատուցել այնպիսի կազմակերպչական կամ տեխնիկական ծառայություններ, որոնք կարող են պահանջվել. ներառյալ համաճարակաբանական և վիճակագրական ծառայությունները,

է/ խթանել և նպաստել համաճարակային, էնդեմիկ և այլ հիվանդությունների ոչնչացմանն ուղղված աշխատանքներին,

ը/ նպաստել դժբախտ պատահարների կանխարգելմանը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ մասնագիտացված հաստատությունների հետ,

թ/ նպաստել սննդի, բնակարանային պայմանների, սանիտարական իրավիճակի, հանգստի, աշխատանքի, տնտեսական պայմանների, ինչպես նաև շրջակա միջավայրի հիգիենայի այլ ասպեկտների բարելավմանը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ մասնագիտացված հաստատությունների հետ,

ժ/ նպաստել առողջապահության բարելավման գործի մեջ ներդրումներ կատարող գիտական և մասնագիտական խմբերի միջև համագործակցությանը,

ժա/ առաջարկել կոնվենցիաներ, համաձայնագրեր և հրահանգներ, հանձնարարականներ տալ միջազգային առողջապահության հարցերի վերաբերյալ և կատարել այնպիսի պարտականություններ, որոնք վերը նշվածներով կարող են սահմանվել Կազմակերպության համար և համապատասխանում են Կազմակերպության նպատակներին,

ժբ/ նպաստել մոր և երեխայի առողջության, բարեկեցության և փոփոխվող միջավայրի հետ ներդաշնակ գոյատևելու կարողության բարելավմանը,

ժգ/ նպաստել հոգեկան առողջության բարելավմանը, մասնավորապես, մարդկային հարաբերությունների ներդաշնակության ապահովմանն ուղղված ջանքերին,

ժդ/ նպաստել և իրականացնել հետազոտություններ առողջապահության ոլորտում,

ժե/ նպաստել կրթական չափանիշների բարելավմանը ինչպես առողջապահության, այնպես էլ վերջինիս առնչվող ոլորտներում,

ժզ/ անհրաժեշտության դեպքում այլ մասնագիտական հաստատությունների հետ միասին մշակել և միջազգային հանրությանը հայտնել պրոֆիլակտիկական և բուժական տեսակետներից հանրային առողջության և առողջապահության վրա ազդող վարչարարական և սոցիալական մեխանիզմների մասին. ներառյալ բուժօգնության ծառայությունները և սոցիալական ապահովության համակարգը,

ժէ/ ապահովել առողջապահության ոլորտում իրազեկությունը, խորհրդակցությունների անցկացումը և օժանդակության ցուցաբերումը,

ժը/ նպաստել առողջության հարցերի վերաբերյալ բոլոր ժողովուրդների միջև իրազեկված հանրային կարծիքի ձևավորմանը և զարգացմանը,

ժթ/ սահմանել և անհրաժեշտության դեպքում վերանայել հիվանդությունների, մահվան պատճառների և հանրային առողջապահության պրակտիկաների միջազգային դասակարգումները,

ի/ անհրաժեշտության դեպքում ստանդարտացնել բժշկական ախտորոշման մեթոդները,

իա/ մշակել և ներդնել սննդամթերքի, կենսաբանական, դեղագործական և նման այլ արտադրանքի ստանդարտներ,

իբ/ ձեռնարկել Կազմակերպության նպատակին հասնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Գլուխ 3
Անդամակցություն և ասոցիատիվ անդամակցություն

Հոդված 3

Կազմակերպության անդամակցությունը բաց է բոլոր Պետությունների համար:

Հոդված 4

Միավորված ազգերի կազմակերպության անդամները կարող են Կազմակերպության անդամներ դառնալ՝ ստորագրելով կամ որևէ այլ կերպ ընդունելով սույն Սահմանադրությունը՝ 19-րդ գլխի պայմաններին, ինչպես նաև իրենց սահմանադրություններով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 5

Այն Պետությունները, որոնց Կառավարություններին ուղղվել են 1946 թվականին Նյու Յորքում անցկացված Առողջապահության միջազգային համաժողովին մասնակցելու համար ներկայացուցիչ ուղարկելու հրավերներ, կարող են Կազմակերպությանն անդամակցել՝ ստորագրելով կամ որևէ այլ կերպ ընդունելով սույն Սահմանադրությունը՝ 19-րդ գլխի պայմաններին, ինչպես նաև իրենց սահմանադրություններով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ պայմանով, որ այդպիսի ստորագրումը կամ

ընդունումը պետք է տեղի ունենան մինչև Առողջապահության ասամբլեայի առաջին նիստի գումարումը:

Հոդված 6

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության և Կազմակերպության միջև 16-րդ գլխի դրույթներին համապատասխան հաստատված համաձայնագրով սահմանված պայմանների՝ այն Պետությունները, որոնք Կազմակերպության անդամ չեն դառնում 4-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան, կարող են դիմում ներկայացնել Կազմակերպությանն անդամակցելու մասին և Կազմակերպության անդամ կճանաչվեն, եթե վերը նշված դիմումը հաստատվի Առողջապահության ասամբլեային ներկա ձայների պարզ մեծամասնությամբ:

Հոդված 7

Այն դեպքում, երբ Կազմակերպության որևէ անդամ ի վիճակի չի կատարելու Կազմակերպության առջև իր ֆինանսական պարտավորությունները, կամ որևէ այլ բացառիկ հանգամանքում, Առողջապահության ասամբլեան կարող է, այնպիսի պայմաններով, որոնք ինքը նպատակահարմար կհամարի, ժամանակավորապես դադարեցնել տվյալ անդամի ձայնի իրավունքը և չեղյալ հայտարարել այդ անդամի համար սահմանված այլ արտոնությունները: Առողջապահության ասամբլեան կարող է հետագայում վերականգնել ձայնի իրավունքը և արտոնությունները:

Հոդված 8

Այն տարածքները կամ տարածքների խմբերը, որոնք օժտված չեն սեփական միջազգային հարաբերությունները ղեկավարելու լիազորություններով, կարող են Առողջապահության ասամբլեայի կողմից Կազմակերպության ասոցիատիվ անդամ ճանաչվել այդպիսի տարածքի կամ տարածքների խմբի անունից դրա միջազգային հարաբերությունների ղեկավարման համար պատասխանատու Կազմակերպության անդամի կամ այլ լիազոր ներկայացուցչի կողմից արված հայտարարության հիման վրա: Առողջապահության ասամբլեայում Կազմակերպության ոչ լրիվ անդամների ներկայացուցիչները պետք է մասնագիտացված լինեն առողջապահության ոլորտում և ընտրվեն տեղական բնակչությունից: Կազմակերպության ասոցիատիվ անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Առողջապահության ասամբլեայի կողմից:

Գլուխ 4
Մարմիններ

Հոդված 9

Կազմակերպության գործունեությունն իրականացվում է.

ա/ Առողջապահության համաշխարհային ասամբլեայի կողմից /այսուհետ՝ Առողջապահության ասամբլեա/,

բ/ Գործադիր խորհրդի կողմից /այսուհետև՝ Խորհուրդ/,

գ/ Քարտուղարության կողմից:

Գլուխ 5

Առողջապահության համաշխարհային ասամբլեա

Հոդված 10

Առողջապահության ասամբլեան կազմված է Կազմակերպության անդամներին ներկայացնող պատվիրակներից:

Հոդված 11

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ կարող է ներկայացված լինել ոչ ավելի, քան երեք պատվիրակով, որոնցից մեկը պետք է լինի պատվիրակության ղեկավարը: Պատգամավորներն ընտրվում են առողջապահության ոլորտում առավել մասնագիտացած և փորձառու անձանցից, որոնք նախընտրելի է, որ ներկայացնեն Կազմակերպության տվյալ անդամի առողջապահության ոլորտը կառավարող պետական մարմինները:

Հոդված 12

Պատվիրակներին կարող են ուղեկցել տեղակալներ և խորհրդականներ:

Հոդված 13

Առողջապահության ասամբլեան գումարվում է պարբերաբար՝ տարին մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել հատուկ նիստեր: Հատուկ նիստերը գումարվում են Խորհրդի որոշմամբ կամ Կազմակերպության անդամների ձայների մեծամասնությամբ:

Հոդված 14

Առողջապահության ասամբլեան յուրաքանչյուր ամենամյա նիստին որոշում է այն երկիրը, որտեղ անցկացվելու է հաջորդ հերթական նիստը, ինչից հետո Խորհուրդը հաստատում է այդ որոշումը: Խորհուրդը որոշում է նաև հատուկ նիստերի անցկացման վայրերը:

Հոդված 15

Խորհուրդը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի հետ համաձայնեցնելուց հետո որոշում է ամենամյա հերթական և հատուկ նիստերի անցկացման ժամկետները:

Հոդված 16

Առողջապահության ասամբլեան յուրաքանչյուր ամենամյա նիստի սկզբում ընտրում է իր Նախագահին և այլ պաշտոնատար անձանց: Վերջիններս իրենց պարտականությունները կատարում են մինչև հաջորդ ընտրությունների անցկացումը:

Հոդված 17

Առողջապահության ասամբլեան ընդունում է իր սեփական ընթացակարգի կանոնները:

Հոդված 18

Առողջապահության Ասամբլեան՝

ա/ որոշում է Կազմակերպության գործունեության ուղղությունները,

բ/ նշանակում է Կազմակերպության այն անդամներին, որոնք իրավունք ունեն Խորհրդի աշխատակիցներ նշանակելու,

գ/ նշանակում է Գլխավոր տնօրենին,

դ/ քննարկում և հաստատում է Խորհրդի և Գլխավոր տնօրենի զեկույցները և գործունեությունը, Խորհրդին հրահանգավորում է այն հարցերի վերաբերյալ, որոնց նկատմամբ ցանկալի է որևէ քայլ ձեռնարկել, անցկացնել ուսումնասիրություն կամ հետազոտություն,

ե/ ստեղծում է Կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ կոմիտեներ,

զ/ վերահսկում է Կազմակերպության ֆինանսական գործունեությունը, քննարկում և հաստատում է բյուջեն,

է/ Խորհրդին և Գլխավոր տնօրենին հանձնարարում է Կազմակերպության անդամների և միջազգային կառավարական և հասարակական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել առողջապահության ոլորտին առնվող ցանկացած հարցի վրա, որը Առողջապահության ասամբլեան նպատակահարմար է գտնում լուսաբանել,

ը/ Կազմակերպության առջև որևէ պարտականության կատարման համար պատասխանատու միջազգային, ազգային, պետական կամ հասարակական ցանկացած կազմակերպությանն առաջարկում է ներկայացուցիչ նշանակել Առողջապահության ասամբլեայի նիստերի և կոմիտեների աշխատանքներին, ինչպես նաև նրա հովանու ներքո անցկացվող համաժողովներին առանց ձայնի իրավունքի մասնակցելու համար՝ Առողջապահության ասամբլեայի կողմից իսկ սահմանված պայմանների համաձայն: Ազգային կազմակերպությունների դեպքում այդպիսի առաջարկությունները ներկայացվում են միայն համապատասխան երկրների Կառավարությունների հետ հարցը համաձայնեցնելուց հետո,

թ/ քննարկում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի, Տնտեսական և սոցիալական խորհրդի, Անվտանգության խորհրդի և Խնամակալության խորհրդի կողմից տրված՝ առողջապահության ոլորտին առնչվող հանձնարարականները և հաշվետվություն է ներկայացնում նշված հանձնարարականների կատարման նպատակով Կազմակերպության կողմից իրականացված միջոցառումների մասին,

ժ/ հաշվետվություն է ներկայացնում Տնտեսական և սոցիալական խորհրդին Կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության միջև գործող համաձայնագրերի կատարման մասին,

ժա/ օժանդակում է Կազմակերպության աշխատակիցների կողմից իրականացվող հետազոտությունների անցկացմանը և իրականացնում է դրանց ղեկավարումը սեփական հաստատությունների ստեղծման կամ Կազմակերպության ցանկացած անդամի կառավարական կամ հասարակական կազմակերպության հետ՝ այդ անդամի Կառավարության համաձայնության դեպքում՝ համագործակցության միջոցով,

ժբ/ ստեղծում է ցանկացած այնպիսի հաստատություն, որն անհրաժեշտ է համարում,

ժգ/ ձեռնարկում է Կազմակերպության նպատակին հասնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Հոդված 19

Առողջապահության ասամբլեան օժտված է Կազմակերպության իրավասությունների շրջանակներում գտնվող ցանկացած հարցով կոնվենցիաներ կամ համաձայնագրեր ընդունելու լիազորություններով: Այդպիսի կոնվենցիաները կամ համաձայնագրերը համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկում Առողջապահության ասամբլեայի անդամների երկու երրորդը, և ուժի մեջ են մտնում Կազմակերպության յուրաքանչյուր անդամի համար, նրա սահմանադրական ընթացակարգին համաձայն, հաստատվելուց հետո:

Հոդված 20

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորություն է ստանձնում, որ Առողջապահության ասամբլեայի կողմից որևէ կոնվենցիայի կամ համաձայնագրի հաստատումից հետո տասնութ ամսվա ընթացքում ինքը քայլեր կձեռնարկի դրանք հաստատելու ուղղությամբ: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Գլխավոր տնօրենին տեղեկացնում է ձեռնարկված քայլերի մասին, իսկ կոնվենցիան կամ համաձայնագիրը չընդունելու դեպքում հայտարարում է չընդունելու պատճառների մասին: Ընդունելու դեպքում Կազմակերպության յուրաքանչյուր անդամ տարեկան հաշվետվություն է ներկայացնում Գլխավոր տնօրենին՝ 14-րդ գլխի դրույթներին համապատասխան:

Հոդված 21

Առողջապահության ասամբլեան օժտված է հետևյալի վերաբերյալ հրահանգներ սահմանելու լիազորություններով.

ա/ սանիտարական և կարանտինային պահանջներ և հիվանդությունների համաշխարհային տարածման կանխարգելմանն ուղղված այլ ընթացակարգեր,

բ/ հիվանդությունների, մահվան պատճառների և հանրային առողջության պրակտիկաների դասակարգում,

գ/ միջազգային կիրառման համար նախատեսված ախտորոշման ընթացակարգերի համար չափանիշներ,

դ/ միջազգային առևտրում շրջանառվող կենսաբանական, դեղագործական և նման այլ արտադրանքի անվտանգության, մաքրության և ակտիվության չափանիշներ,

ե/ միջազգային առևտրում շրջանառվող կենսաբանական, դեղագործական և նման այլ արտադրանքի գովազդ և մակնշում:

Հոդված 22

21-րդ հոդվածի համաձայն ընդունված հրահանգները Կազմակերպության բոլոր անդամների համար ուժի մեջ են մտնում Առողջապահության ասամբլեայի կողմից դրանք ընդունվելու մասին ծանուցումից հետո՝ բացառությամբ Կազմակերպության այն անդամների, որոնք Գլխավոր տնօրենին հայտարարության մեջ նշված ժամկետներում հայտնել են դրանց մերժման կամ քննարկման մասին:

Հոդված 23

Առողջապահության ասամբլեան կարող է առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության անդամներին Կազմակերպության իրավասության շրջանակներում գտնվող ցանկացած հարցի վերաբերյալ:

Գլուխ 6
Գործադիր խորհուրդ

Հոդված 24

Խորհուրդը կազմված է Կազմակերպության անդամների մեծամասնության կողմից ընտրվող երեսուներկու անդամներից: Առողջապահության Ասամբլեան, հաշվի առնելով արդարացի աշխարհագրական տեղաբաշխումը, ընտրում է Կազմակերպության այն անդամներին, որոնք իրավունք ունեն ներկայացուցիչներ նշանակելու Խորհրդի կազմում՝ պայմանով, որ Կազմակերպության այդպիսի անդամների թիվը չպետք է լինի 44-րդ հոդվածին համապատասխան որոշված յուրաքանչյուր տարածաշրջանային կազմակերպության կողմից առաջադրված երեք անդամից ոչ պակաս: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Խորհրդի կազմում նշանակում է առողջապահության ոլորտում համապատասխան տեխնիկական փորձառություն ունեցող անձի, ինչպես նաև իր տեղակալներին և խորհրդականներին:

Հոդված 25

Այդ Անդամներն ընտրվում են երեք տարի ժամկետով և կարող են վերընտրվել՝ պայմանով, որ երեսունմեկ անդամից Խորհրդի կազմն ընդլայնելու մասին սույն Սահմանադրության մեջ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո կայացած Առողջապահության ասամբլեայի առաջին նիստին ընտրված տասնմեկ անդամների համար յուրաքանչյուր լրացուցիչ անդամի լիազորությունների ժամկետն անհրաժեշտության դեպքում կարող է ավելի կարճ լինել. այնքանով, որքանով դա կարող է հեշտացնել առնվազն մեկ անդամի ընտրությունը յուրաքանչյուր տարածաշրջանային կազմակերպության կողմից՝ յուրաքանչյուր տարի:

Հոդված 26

Խորհուրդը գումարվում է տարեկան առնվազն երկու անգամ և ինքն է որոշում նիստերի անցկացման վայրը:

Հոդված 27

Խորհուրդը Նախագահ է ընտրում իր անդամների կազմից, ինքն է սահմանում իր ընթացակարգի կանոնները:

Հոդված 28

Խորհուրդը՝

ա/ իրականացնում է Առողջապահության ասամբլեայի քաղաքականությունը և կատարում նրա որոշումները,

բ/ գործում է որպես Առողջապահության ասամբլեայի գործադիր մարմին,

գ/ իրականացնում է Առողջապահության ասամբլեայի կողմից իրեն հանձնարարված այլ գործառույթներ,

դ/ Առողջապահության ասամբլեային տեղեկացնում է իր իրավասությունների շրջանակներում ընդգրկված հարցերի, ինչպես նաև կոնվենցիաների, համաձայնագրերի և հրահանգների համաձայն Կազմակերպությանն առնչվող հարցերի մասին,

ե/ սեփական նախաձեռնությամբ խորհուրդներ է տալիս և առաջարկություններ է ներկայացնում Առողջապահության ասամբլեայի քննարկման համար,

զ/ մշակում է Առողջապահության ասամբլեայի նիստերի օրակարգը,

է/ Առողջապահության ասամբլեայի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում որոշակի ժամանակահատվածի համար սահմանված աշխատանքային պլանը,

ը/ ուսումնասիրում է իր իրավասությունների շրջանակներում ընդգրկված բոլոր հարցերը,

թ/ անհապաղ միջամտություն պահանջող իրավիճակների ծագման դեպքում արտակարգ միջոցներ է ձեռնարկում Կամակերպության գործառույթների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում: Նա, մասնավորապես, կարող է Գլխավոր տնօրենին լիազորել, որ նա անհրաժեշտ քայլեր ձեռնարկի համաճարակների դեմ պայքարի կամ աղետների զոհերին բժշկական օգնության ցուցաբերման ուղղությամբ: Ուսումնասիրման և վերլուծության է ենթարկում Կազմակերպության որևէ անդամի կամ Գլխավոր տնօրենի կողմից Խորհրդի ուշադրությանը ներկայացված միջոցների անհապաղությունը:

Հոդված 29

Խորհուրդը Առողջապահության ասամբլեայի անունից իրականացնում է վերջինիս կողմից իրեն վերապահված լիազորությունները:

Գլուխ 7
Քարտուղարություն

Հոդված 30

Քարտուղարությունն ընդգրկում է Գլխավոր տնօրենին, ինչպես նաև Կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և վարչական անձնակազմին:

Հոդված 31

Գլխավոր տնօրենն ընտրվում է Առողջապահության ասամբլեայի կողմից, Խորհրդի առաջադրմամբ՝ Առողջապահության ասամբլեայի կողմից իսկ սահմանված պայմանների համաձայն: Խորհրդին ենթարկվող Գլխավոր տնօրենը Կազմակերպության գլխավոր տեխնիկական և վարչական պաշտոնատար անձն է:

Հոդված 32

Գլխավոր տնօրենը ի պաշտոնե հանդիսանում է Առողջապահության ասամբլեայի, Խորհրդի և Կազմակերպության բոլոր հանձնաժողովների և կոմիտեների, ինչպես նաև Կազմակերպության հովանու ներքո գումարված խորհրդաժողովների քարտուղարը: Նա այդ լիազորությունները կարող է փոխանցել այլ անձանց:

Հոդված 33

Գլխավոր տնօրենը կամ նրա ներկայացուցիչը Կազմակերպության անդամների հետ համաձայնության ձեռքբերման միջոցով կարող է կարգ սահմանել, որն իրեն թույլ կտա իր պարտականություններն արդյունավետ կերպով կատարելու նպատակով անմիջականորեն փոխգործակցել պետությունների տարբեր պետական մարմինների հետ, հատկապես, առողջապահության համար պատասխանատու պետական մարմինների և ազգային առողջապահական կազմակերպությունների հետ՝ պետական կամ հասարակական: Նա անմիջականորեն փոխգործակցում է այն միջազգային կազմակերպությունների հետ, որոնց գործունեությունը գտնվում է Կազմակերպության իրավասությունների ներքո: Նա իրազեկում է տարածաշրջանային ներկայացուցչություններին նրանց իրավասությունների ներքո գտնվող տարածքներին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ:

Հոդված 34

Գլխավոր տնօրենը նախապատրաստում և Խորհրդին է ներկայացնում Կազմակերպության բյուջեի նախագիծը:

Հոդված 35

Քարտուղարության աշխատակազմը նշանակվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ ըստ Առողջապահության ասամբլեայի կողմից սահմանված կարգի: Աշխատակազմում աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ կարևորագույն չափանիշը Քարտուղարության արդյունավետության, ամբողջականության և միջազգային ներկայացուցչության ապահովումն է ամենաբարձր մակարդակով: Անհրաժեշտ է նաև նկատի առնել աշխատակազմում հնարավորինս լայն աշխարհագրական ներկայացուցչության ապահովման կարևորությունը:

Հոդված 36

Կազմակերպության աշխատակազմի աշխատանքային պայմանները պետք է հնարավորինս համապատասխանեն Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններում առկա աշխատանքային պայմաններին:

Հոդված 37

Իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս Գլխավոր տնօրենն ու աշխատակազմը չպետք է հետևեն որևէ Կառավարության կամ Կազմակերպության շրջանակներում չընդգրկված որևէ մարմնի ցուցումներին կամ հրահանգներին: Նրանք պետք է զերծ մնան որևէ գործողությունից, որոնք կարող են ազդել միջազգային կազմակերպության ծառայողի հեղինակության վրա: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ իր հերթին պարտավորվում է հարգանք ցուցաբերել Գլխավոր տնօրենի և աշխատակազմի նկատմամբ և չի ձգտում ազդեցություն գործել նրանց վրա:

Գլուխ 8
Կոմիտեներ

Հոդված 38

Խորհուրդը Առողջապահության ասամբլեայի առաջադրմամբ, Գլխավոր տնօրենի առաջարկությամբ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ստեղծում է այնպիսի կոմիտեներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կազմակերպության իրավասությունների շրջանակներում ընդգրկված նպատակներին և խնդիրներին ծառայելու համար:

Հոդված 39

Խորհուրդը ժամանակ առ ժամանակ, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, քննարկում է յուրաքանչյուր կոմիտեի գործունեությունը շարունակելու անհրաժեշտությունը:

Հոդված 40

Խորհուրդը կարող է նախատեսել Կազմակերպության կողմից համատեղ կամ խառը կոմիտեների ստեղծումը կամ այլ կազմակերպությունների հետ միասին նման կոմիտեներում մասնակցությունը, ինչպես նաև Կազմակերպության ներկայացուցչությունը այլ կազմակերպությունների կողմից ստեղծված կոմիտեներում:

Գլուխ 9
Խորհրդաժողովներ

Հոդված 41

Առողջապահության ասամբլեան կամ Խորհուրդը կարող են գումարել տարածաշրջանային, համընդհանուր, տեխնիկական և այլ հատուկ խորհրդաժողովներ Կազմակերպության իրավասությունների շրջանակներում ընդգրկված ցանկացած հարցի քննարկման նպատակով, ապահովել այդպիսի խորհրդաժողովներում միջազգային կազմակերպությունների և, համապատասխան Կառավարությունների համաձայնությամբ, ազգային պետական կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցչությունը: Ներկայացուցչության կարգը սահմանվում է Առողջապահության ասամբլեայի Խորհրդի կողմից:

Հոդված 42

Խորհուրդը կարող է նախատեսել Կազմակերպության ներկայացուցչությունն այնպիսի խորհրդաժողովներում, որոնց մասնակցելու մեջ Կազմակերպությունը շահագրգռված է:

Գլուխ 10
Կենտրոնական

Հոդված 43

Կազմակերպության կենտրոնականի գտնվելու վայրը սահմանվում է Առողջապահության ասամբլեայի կողմից՝ Միավորված ազգերի կազմակերպության հետ համաձայնեցմամբ:

Գլուխ 11
Տարածաշրջանային կազմակերպություններ

Հոդված 44

ա/ Առողջապահության ասամբլեան ժամանակ առ ժամանակ սահմանում է այն աշխարհագրական տարածաշրջանները, որտեղ առկա է տարածաշրջանային կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտություն:

բ/ Առողջապահության ասամբլեան սահմանված տարածաշրջանում գտնվող Կազմակերպության անդամների մեծամասնության համաձայնության դեպքում տարածաշրջանային կազմակերպություններ է ստեղծում տվյալ տարածաշրջանի հատուկ կարիքների բավարարման նպատակով: Յուրաքանչյուր տարածաշրջանում կարող է գործել միայն մեկ տարածաշրջանային կազմակերպություն:

Հոդված 45

Յուրաքանչյուր տարածաշրջանային կազմակերպություն, սույն Սահմանադրության համաձայն, Կազմակերպության անբաժանելի մասն է հանդիսանում:

Հոդված 46

Յուրաքանչյուր տարածաշրջանային կազմակերպություն կազմված է տարածաշրջանային խորհրդից և տարածաշրջանային ներկայացուցչությունից:

Հոդված 47

Տարածաշրջանային խորհուրդները կազմվում են տվյալ տարածաշրջանում Կազմակերպության անդամների և ասոցիատիվ անդամների ներկայացուցիչներից: Տվյալ տարածաշրջանում գտնվող այն տարածքները կամ տարածքների խմբերը, որոնք օժտված չեն իրենց միջազգային հարաբերությունները ղեկավարելու լիազորություններով և ասոցիատիվ անդամ չեն, նույնպես իրավունք ունեն ներկայացված լինելու տարածաշրջանային խորհուրդներում և մասնակցելու դրանց աշխատանքներին: Տարածաշրջանային խորհուրդներում այդ տարածքների և տարածքների խմբերի իրավունքների և պարտականությունների բնույթը և շրջանակները որոշում է Առողջապահության ասամբլեան՝ այդ տարածքների միջազգային հարաբերությունների համար պատասխանատու Կազմակերպության անդամի կամ այլ իրավասու ներկայացուցչի և տվյալ տարածաշրջանում գտնվող Կազմակերպության այլ անդամների հետ համաձայնեցմամբ:

Հոդված 48

Տարածաշրջանային խորհուրդները գումարվում են ըստ անհրաժեշտության և իրենք են սահմանում յուրաքանչյուր ժողովի անցկացման վայրը:

Հոդված 49

Տարածաշրջանային խորհուրդներն իրենք են սահմանում իրենց ընթացակարգի կանոնները:

Հոդված 50

Տարածաշրջանային խորհուրդները՝

ա/ մշակում են բացառապես տարածաշրջանային բնույթ կրող հարցերը կարգավորող քաղաքականությունը,

բ/ վերահսկում են տարածաշրջանային ներկայացուցչությունների գործունեությունը,

գ/ տարածաշրջանային ներկայացուցչությանն առաջարկում են անցկացնել այնպիսի տեխնիկական խորհրդաժողովներ և իրականացնել այնպիսի միջոցառումներ կամ հետազոտություններ առողջապահության ոլորտում, որոնք տարածաշրջանային խորհրդի կարծիքով կարող են նպաստել Կազմակերպության նպատակների իրագործմանը տվյալ տարածաշրջանում,

դ/ համագործակցում են Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան տարածաշրջանային կոմիտեների, այլ մասնագիտացված մարմինների կոմիտեների և Կազմակերպության հետ ընդհանուր շահեր հետապնդող այլ տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների հետ,

ե/ Գլխավոր տնօրենի միջոցով իրենց առաջարկություններն են ներկայացնում Կազմակերպությանը միջազգային առողջապահությանն առնչվող այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնց կարևորությունը դուրս է գալիս տարածաշրջանային շրջանակներից,

զ/ այն դեպքերում, երբ տվյալ տարածաշրջանի համար նախատեսված Կազմակերպության բյուջեի բաժնեմասը բավարար չէ տարածաշրջանային գործառույթների կատարման համար, տարածաշրջանի պետությունների Կառավարություններին առաջարկում են կատարել լրացուցիչ հատկացումներ,

է/ կատարում են Առողջապահության ասամբլեայի, Խորհրդի կամ Գլխավոր տնօրենի կողմից տարածաշրջանային խորհուրդների համար սահմանված այլ գործառույթներ:

Հոդված 51

Տարածաշրջանային ներկայացուցչությունը հանդիսանում է տարածաշրջանային խորհրդի վարչական մարմինը և ենթարկվում է Կազմակերպության Գլխավոր տնօրենին: Այն ապահովում է Առողջապահության ասամբլեայի և Խորհրդի որոշումների կատարումը տարածաշրջանի սահմաններում:

Հոդված 52

Տարածաշրջանային ներկայացուցչության ղեկավարը Տարածաշրջանային տնօրենն է, որը նշանակվում է Խորհրդի կողմից՝ տարածաշրջանային կոմիտեի հետ համաձայնեցմամբ:

Հոդված 53

Տարածաշրջանային ներկայացուցչության աշխատակազմը ձևավորվում է Գլխավոր տնօրենի և Տարածաշրջանային տնօրենի միջև համաձայնեցված պայմանների հիման վրա:

Հոդված 54

Հիգիենայի համաամերիկյան կազմակերպությունը, որը ներկայացված է Հիգիենայի համաամերիկյան բյուրոյով և Հիգիենայի համաամերիկյան

խորհրդաժողովներով, ինչպես նաև սույն Սահմանադրության ստորագրման պահից առաջ գործող միջկառավարական տարածաշրջանային առողջապահական կազմակերպությունները համապատասխան կարգով ենթակա են Կազմակերպության հետ միավորման: Այդ միավորումը պետք է կատարվի հնարավորինս սեղմ ժամկետներում՝ տվյալ կազմակերպությունների համար պատասխանատու իրավասու մարմինների հետ համաձայնեցված համատեղ գործողությունների միջոցով:

Գլուխ 12
Բյուջե և ծախսեր

Հոդված 55

Գլխավոր տնօրենը նախապատրաստում և Խորհրդին է ներկայացնում Կազմակերպության բյուջեի նախագիծը: Ապա Խորհուրդը քննարկման է ենթարկում բյուջեի նախագիծը և իր ուղղումներով այն ներկայացնում Առողջապահության ասամբլեային:

Հոդված 56

Կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության միջև գործող համաձայնագրերի համաձայն՝ Առողջապահության ասամբլեան քննարկում և հաստատում է բյուջեն, ինչպես նաև ծախսերի բաշխում է կատարում Կազմակերպության անդամների միջև՝ ըստ Առողջապահության Ասամբլեայի կողմից սահմանված բաժնեչափերի:

Հոդված 57

Առողջապահության ասամբլեան կամ Առողջապահության ասամբլեայի անունից հանդես եկող Խորհուրդը կարող է ընդունել և տնօրինել Կազմակերպության օգտին կատարված նվիրատվությունները և ժառանգությունները միայն այն դեպքում, երբ այդպիսի նվիրատվությունների և ժառանգությունների փոխանցման պայմաններն ընդունելի են Առողջապահության ասամբլեայի կամ Խորհրդի համար և համատեղելի են Կազմակերպության նպատակների և քաղաքականության հետ:

Հոդված 58

Սահմանվում է պահուստային ֆոնդ, որը կարող է օգտագործվել Խորհրդի հայեցողությամբ՝ արտակարգ իրավիճակների և չնախատեսված հանգամանքների առաջացման դեպքում:

Գլուխ 13
Քվեարկություն

Հոդված 59

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Առողջապահության ասամբլեայում ունի մեկ ձայն:

Հոդված 60

ա/ Կարևոր հարցերի վերաբերյալ Առողջապահության ասամբլեայի որոշումներն ընդունված են համարվում, եթե դրանց կողմ է քվեարկել Կազմակերպության՝ ներկա գտնվող և քվեարկած անդամների երկու երրորդը: Այդպիսի կարևոր հարցեր են հանդիսանում կոնվենցիաների կամ համաձայնագրերի ընդունումը, 69-րդ, 70-րդ և 72-րդ հոդվածների համաձայն, Կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության և միջկառավարական կազմակերպությունների և հաստատությունների միջև կապեր սահմանող համաձայնագրերի հաստատումը և սույն Սահմանադրության փոփոխությունների և լրացումների հաստատումը:

բ/ Այլ հարցերի վերաբերյալ որոշումները, ներառյալ այնպիսի հարցերի լրացուցիչ խմբերի սահմանումը, որոնց վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն ձայների երկու երրորդ մեծամասնությամբ, ընդունվում են Կազմակերպության՝ ներկա գտնվող և քվեարկող անդամների պարզ մեծամասնությամբ:

գ/ Խորհրդում կամ Կազմակերպության կոմիտեներում նմանօրինակ հարցերով քվեարկություններն անցկացվում են սույն հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված կարգով:

Գլուխ 14
Պետությունների զեկույցները

Հոդված 61

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ տարին մեկ անգամ Կազմակերպությանը զեկույց է ներկայացնում իր ժողովրդի առողջության բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցների և արձանագրված առաջընթացի վերաբերյալ:

Հոդված 62

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ տարին մեկ անգամ Կազմակերպությանը զեկույց է ներկայացնում Կազմակերպության հանձնարարականների, ինչպես նաև կոնվենցիաների, համաձայնագրերի և հրահանգների կատարման ուղղությամբ իր ձեռնարկած միջոցների վերաբերյալ:

Հոդված 63

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ անհապաղ հայտնում է Կազմակերպությանը տվյալ երկրում ընդունված՝ առողջապահության ոլորտին առնչվող կարևոր օրենքների և հրահանգների, ինչպես նաև հրապարակված պաշտոնական զեկույցների և առողջապահության վիճակագրության մասին:

Հոդված 64

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ վիճակագրական և համաճարակաբանական զեկույցներ է ներկայացնում Առողջապահության ասամբլեայի կողմից սահմանված կարգով:

Հոդված 65

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Խորհրդի պահանջով տրամադրում է առողջապահության ոլորտին առնչվող այնպիսի լրացուցիչ տեղեկություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել:

Գլուխ 15
Իրավունքներ, արտոնություններ և անձեռնմխելիություն

Հոդված 66

Կազմակերպությունն իր անդամ հանդիսացող պետության տարածքում օժտված է այնպիսի իրավունքներով, որոնք անհրաժեշտ են իր նպատակների և գործառույթների իրականացման համար:

Հոդված 67

ա/ Կազմակերպությունն իր անդամ հանդիսացող պետության տարածքում վայելում է այնպիսի արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնք անհրաժեշտ են իր նպատակների և գործառույթների իրականացման համար:

բ/ Կազմակերպության անդամների ներկայացուցիչները, Խորհրդի անդամները և Կազմակերպության տեխնիկական և վարչական անձնակազմի աշխատակիցները վայելում են այնպիսի արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնք անհրաժեշտ են Կազմակերպության շրջանակներում իրենց պարտականությունների անկախ կատարման համար:

Հոդված 68

Իրավունքները, արտոնություններն ու անձեռնմխելիությունը սահմանվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի հետ համաձայնեցմամբ Կազմակերպության կողմից մշակվելիք և անդամների միջև կնքվելիք առանձին համաձայնագրով:

Գլուխ 16
Հարաբերություններ այլ կազմակերպությունների հետ

Հոդված 69

Կազմակերպությունը հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 57-րդ հոդվածում նշված՝ Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված մարմիններից մեկը: Միավորված ազգերի կազմակերպության հետ Կազմակերպության հարաբերությունները սահմանող և կարգավորող համաձայնագրերը հաստատվում են Առողջապահության ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդ մեծամասնությամբ:

Հոդված 70

Կազմակերպությունն արդյունավետ հարաբերություններ է հաստատում և համագործակցում է բոլոր այն միջկառավարական կազմակերպությունների հետ, որոնց հետ անհրաժեշտ է: Այդպիսի կազմակերպությունների հետ կնքված ցանկացած

համաձայնագիր ենթակա է հաստատման Առողջապահության ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդ մեծամասնությամբ:

Հոդված 71

Կազմակերպությունը կարող է միջոցներ ձեռնարկել իր իրավասությունների շրջանակներում ընդգրկված հարցերի շուրջ միջազգային հասարակական կազմակերպությունների և, համապատասխան կառավարությունների համաձայնությամբ, պետական և հասարակական ազգային կազմակերպությունների հետ խորհրդակցություններ կազմակերպելու և համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

Հոդված 72

Առողջապահության ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդ մեծամասնությամբ հաստատվելուց հետո Կազմակերպությունը կարող է ցանկացած այլ միջազգային կազմակերպությունից կամ հաստատությունից, որի նպատակները և գործունեությունն ընդգրկված են Կազմակերպության իրավասությունների շրջանակներում, ստանալ այնպիսի գործառույթներ, միջոցներ և պարտականություններ, որոնք կարող են Կազմակերպությանը վերապահվել՝ համապատասխան կազմակերպությունների իրավասու մարմինների միջև կնքված միջազգային համաձայնագրերին կամ պայմանավորվածություններին համապատասխան:

Գլուխ 17
Փոփոխություններ և լրացումներ

Հոդված 73

Սույն Սահմանադրության մեջ փոփոխությունների և լրացումների առաջարկվող տեքստերը Գլխավոր տնօրենի կողմից Կազմակերպության անդամներին են ուղարկվում Առողջապահության ասամբլեայի կողմից դրանք քննարկվելու պահից առնվազն վեց ամիս առաջ: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Կազմակերպության բոլոր անդամների համար՝ դրանց՝ Առողջապահության ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդ մեծամասնությամբ և Կազմակերպության անդամների երկու երրորդ մեծամասնությամբ, այդ անդամների սահմանադրական ընթացակարգերին համապատասխան, ընդունվելուց հետո:

Գլուխ 18
Մեկնաբանում

Հոդված 74

Սույն Սահմանադրության չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը հավասարազոր են:

Հոդված 75

Սույն Սահմանադրության դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ, որը չի կարգավորվել Առողջապահության ասամբլեայի կողմից կամ բանակցությունների միջոցով, Միջազգային դատարանի կանոնադրության

համաձայն՝ փոխանցվում է Միջազգային դատարան, եթե շահագրգիռ կողմերը չեն պայմանավորվում կարգավորման այլ եղանակի մասին:

Հոդված 76

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հետ համաձայնեցմամբ կամ Միավորված ազգերի կազմակերպության և Կազմակերպության միջև գործող համաձայնագրերին համապատասխան՝ Կազմակերպությունը կարող է Միջազգային դատարան դիմել՝ իր իրավասությունների շրջանակներում ընդգրկված իրավաբանական բնույթի ցանկացած հարցի առնչությամբ խորհրդատվություն ստանալու խնդրանքով:

Հոդված 77

Խորհրդատվական կարծիք տրամադրելու մասին դիմումի ներկայացման առնչությամբ լսումներին Կազմակերպության անունից կարող է հանդես գալ Գլխավոր տնօրենը: Նա նախապատրաստում է հարցի ներկայացումը Դատարանին և միջոցներ է ձեռնարկում այդ հարցի բազմակողմանի դիտարկումն ապահովելու համար:

Գլուխ 19
Ուժի մեջ մտնելը

Հոդված 78

3-րդ գլխի դրույթներին համաձայն՝ սույն Սահմանադրությունը բաց է բոլոր Պետությունների ստորագրման կա ընդունման համար:

Հոդված 79

ա/ Պետությունները կարող են սույն Սահմանադրության անդամ դառնալ.
- առանց վերապահումների և հաստատման իմաստ կրող ստորագրության միջոցով,
- ընդունմամբ հաստատման ենթակա ստորագրության միջոցով,
- ընդունման միջոցով:

բ/ Ընդունումն ուժի մեջ է մտնում պաշտոնական փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու պահից:

Հոդված 80

Սույն Սահմանադրությունն ուժի մեջ է մտնում դրան, 79-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, Միավորված ազգերի կազմակերպության քսանվեց անդամների միանալու պահից:

Հոդված 81

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածին՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գրանցում է սույն Սահմանադրությունը՝ մեկ Պետության անունից այն առանց վերապահումների և

հաստատման իմաստով ստորագրելուց կամ ընդունման առաջին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո:

Հոդված 82

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Սահմանադրության անդամ պետություններին հայտնում է դրա ուժի մեջ մտնելու օրը: Նա նրանց նաև հայտնում է սույն Սահմանադրությանն այլ Պետությունների միանալու օրերը:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալ ներկայացուցիչները, օժտված լինելով համապատասխան լիազորություններով, ստորագրեցին սույն Սահմանադրությունը:

Կատարված է Նյու Յորք քաղաքում 1946 թվականի հուլիսի քսաներկուսին, մեկ օրինակով՝ չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն, ընդ որում բոլոր տեքստերը համարվում են հավասարազոր: Բնօրինակ տեքստերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվներին: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը հաստատված օրինակներն ուղարկում է Խորհրդաժողովին ներկայացված յուրաքանչյուր Կառավարության:

***Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 4-ից:**